

թիւն չունի ոչ վանքի անցեալի և ոչ էլ նրա հանճարեղ հիմնադրի մասին։ Նրա թողլաւութեամբ մի ինչ որ գրէց համարեան տաճարի տակ ըստուն է ցանել...։ Այն որբավայրում, որ զեռ եօթ հարիւր տարի առաջ զիտութեան և ուստան սերմերն էին ցանուում, այժմ բառան է ցանուում...։

Սակայն թողնենք մեր տիւռը խորհրդածութիւնները և տեսնենք թէ ինչ է մասցել այժմ<sup>1)</sup> Նոր Գետիկում կիրակոս պատմագրի յիշած տասներեց մեծ ու փոքր տաճարներից։

## I

## Գ Ո Ւ Ի Թ

Սկսենք գաւթից։ Արրատաշ քարից շինուած այս հոյակապ չէնքը ներսից անխափան է, արտապուած՝ թափուած են միայն կը-տուրի սալ քարերը։ Երկու մուաք ունի. մէկն արեմտեան, մէւոր հիւսիսային կողմից. արեմտեանը կամարակապ է, զոյնզգոյն քարերով Գաւթի կամարակապ տանիքն ու գմբէթը կանգնած են չորս սիւների և ութը կիսասիւների վրայ։ Յատակը ծածկուած է սալաքարով։ Արենելեան որմի մէջ, աջ և ձախ կողմից, կան երկյարկ խորաններ. այս որմին կցուած են նոյնպէս բեմի նմանութիւն. ունեցող և արրատաշ քարից շինուած փոքրիկ պատուանդաններ, որոնց վրայ քանդակուած են փոքրիկ սիւնազարդ կամարներ։ Այդ պատուանդանների վրայից է երկրորդ յարկի խորանների մուաքը։ Գաւթի իւրաքանչիւր կամարի տակ եղել է մի մի լուսամուտ. դրանչից միքանիմ այժմ վակ են։


Գաւթի տարածութիւնը՝ արենելքից—արեմուած 18 արշին է, իսկ հիւսիսից—հարաւ. 19 արշին 2 վերշոկ։ Միապազապ սիւների բարձրութիւնն է 2 արշին 6 վերշոկ. սիւների ցրչապատճն է 3 արշ. 11 վերշոկ։ Գաւթի բարձրութիւնը 13 արշին 5 վերշոկ է. իսկ կամարների բարձրութիւնը 8 արշին 6 վերշոկ։ կամարների մէջի տարածութիւնը 6 արշին 2 վերշոկ։

## Գ Ո Ւ Թ Ի ԱՐ ՀԱՆՈՒՄՆ ԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արեմտեան մուաքի կամարի վրայի արձանագրութիւնը կիսով չափ եղուած է. կարգացուած է։

1) «Համամամ Առտուծոյ... որպի Գայլամագին միաբա-

<sup>1)</sup> Պահիք նկարագիրն արև Աք 1802 թ. ամաց, զորքական նախապարհարդարներն միջնորդներ, մեր խնամէր աշխիքներն ոգութեամբ։



STADES QUÉBEC

նեցայ սուրբ Աստուածածնիս. հաստատեցին դ (4) պատարագ ի տանի Յովիաննու Կարապետին զկնի յայտնութեան. զա (1) իմ՝ մարք Գայլածագին զա իմ՝ մարք Մամքանին. զր (2) իմ՝ եղբարցն Բուալանին եւ աղքերկանն. կատարէցն աւ ընկնին յԱստուծոյ. ի թվ. Ձևթ 1) (742 հ. Եւ 1293 թ. փրկչական):

Մուտքի աջ կողմը, առաջին սեան զլիբին արձանագրուած է.

2) «Հ տանի Փիլիպոսի առաքելցյն ա պատարագ Սարկաւագին Սարգսի է անխափան. զթովհաննէս զվանականն<sup>2)</sup> յաղաւ թս յիշեցէք»:

Երկրորդ կամարին կից արձանագրուած է. (ամբողջը լաւ չէ կարգացում):

3) «Ղաման Աստուծոյ Կիրակոս վարդապետս<sup>3)</sup> տուի ի մեր եկեղեցիս ի (20) զիրք եւ խ (40) դանեկան, ա (1) շուրջառ եւ դրի զղասերս (?) եւ միաբանքս տուին մեզ թ աւր պատարագ ի տանի Թաղէոսի առաքելցյն անխափան... զղիա... զՅովի... Սարգ... յիշ...

Այս արձանագրութեան ներքեր.

4) «Ծս հարի (?) միաբան սր. Աստուածածնիս ետու զւագատսին ի ջաղացէն ի վերջ վանքս եւ ստացայ թ աւր զեկեղեցիս պատարագ ի տանի Աստուածածնի. որ խափանէ, դատի յԱստուծոյ»:

Դաւթի հարաւային կամարի ճակատին.

5) «Ծս Մխիթար հիան<sup>4)</sup> միաբան եւ աշխատողս եկեղեցւոյս... լիթն (?) է մինչի ծերութիւն շինեցի զտոնս ազաւ թից... ՍՍ...զի... սյնլովս Ցովհաննէս եւ ստացայ ինժ յիշատակ հոգեւոր թ աւր պատարագ կամակցութեամբ վարդապանն (?) առաջի Քրիստոսի է զայս եւ միաբանցն ուիս-

<sup>1)</sup> Կարող է և Զեն լինել (745).

<sup>2)</sup> Գոյք աշակերտ և յետոյ նշանաւոր հանդիսացած Յովիաննէս Տառւեցին է, որ վանական մականունը ստացաւ.

<sup>3)</sup> Անշուշտ Կիրակոս Գանձակեցի պատմագիրն է:

<sup>4)</sup> Այս Մխիթար հիւմինին յիշում է նաև Կիրակոս պատմաբանը. Գոյք յաջորդ Մարտիրոս վարդապետի ժամանակ եղած շինութիւնները սահ է անում:

տիս մի աւք Մինիթարայ եւ մի աւք Թովհաննիսի Խաչգիտին տամնին. ով զմեր յիշատակս խափանէ մեր մեղաց պարտական է»:

Դաւթի հիմնային կամարի ներքեւ, սեան ճակատին.

6) «Նշան խաչի... արքն... զի նոցա ընչիւթ... յիշեցէք զմարսեղն...» (եղծուած է բոլորովին):

Նոյն կողմբ միւս սեան ճակատին.

7) «Կաման Աստուածոյ... եղբարքս Մոպացիոս (?) Մարտիրոս, Խզնատիրոս, Դրիգոր. տվայ յեկեղեցիս ին (40) զանկան... միաբանոս թ. պատարագ ետոն մեզ զամատ... Աստուածածնին»:

Դաւթի արենելեան որմի մէջն է զանուում մայր առաջարի կամարակապ և զեղեցկապանդակ մուաքը. այս դժիգ տաճարը մանելու համար պէտք է բարձրանակ երկու քարեայ աստիճան, Մուաքի ճակատի քարի վրայ արձանագրութիւն կայ, բայց այնքան եղծուած է, որ չէ կարդացւում:

## II.

### ԱԲ. ԱՅՏՈՒԱՆԱԾՆՈՒՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս տաճարն է, որ Դոչ Մինիթարը հինգ տարուայ ընթացքում աւարտեց և փառաւոր հանդիսով օծել տուեց: Տաճարի պատերն անխախտ են մնացել, բայց կաթուղինէն և զմբէթը ճեղքուած են և փլուելու վտանգի մէջ, բարձրադիր կաթուղինէն կանգնուած է չորս կամարների վրայ, առանց սիւների. իւրաքանչիւր կամարի տակ կայ մի լուսամուտ. կաթուղինէն ևս չորս լուսամուտ տնին Փառակեզզ տաճարն ամբողջապէս կառուցուած է մաքուր, որբատաշ քարից. յատակը ծածկուած է սալաքարով: Սեղանն ամբողջապէս նոյնպէս որբատաշ քարից է և աջ ու ձախ կողմից ունի երկարկանի խորաններ. երկրորդ յարկ խորանների մուաքը բնմի վրայից է: Տաճարը մկրտութեան աւազան չունի. եկեղեցական զարդերից բոլորովին զուրկ է. բնմը նոյն իսկ խաչկալ չունի. պատարագն ուղղակի մէմ քարի վրայ է տեղի ունենում: Միակ արձաթեայ սոկեջրած սկիհն էլ, ինչպէս երեսմ է վրայի գրուածքից, որ. եջմիածնից է ուղարկուած ։)

1) «Եթշատակ է Շորբեցի Ստեփանի կողակից Փարւոյն, որդ-

